

ՆՈՐԱՅԱՅՏ ԲԱՌԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՄ (ԺԴ.-ԺԷ. ԴԴ.)

Գուրգէն Խաչատրեան

Ամփոփում

Գրաբարը թէեւ միջին դարերում զրկուել էր խօսակցական հիմքից, սակայն միջին Հայերէնի ժամանակահատուածում զուգահեռաբար շարունակում էր մնալ իբրեւ գրի լեզու¹: Անշուշտ, խօսքը վերաբերում է ոչ բոլոր բնագաւառներին, որովհետեւ դրանց մի մասում (բժշկագիտութիւն, ժողովրդական բանահիւսութիւն եւ այլն) գերիշխող էր միջին Հայերէնը, մինչդեռ պատմագրութեան, պաշտօնական գրագրութեան, կրօնադաւանաբանական, տրամաբանական, գիտական բովանդակութեամբ երկերում՝ գրաբարը: Վերջինով գրուել են նաեւ կաթողիկոսների եւ պատրիարքների կոնդակները, որոնցում տեղ գտած մի շարք բառային միաւորներ գրաբարի՝ մեզ յայտնի բառարաններում ու մասնագիտական գրականութեան մէջ առայսօր չեն ուսումնասիրուել:

Յօդուածում քննութեան ենք առել շուրջ յիսուն նորայայտ բառային միաւոր: Դրանք առաջին անգամ վկայուել են 14-17-րդ դարերի կաթողիկոսական կոնդակներում, որոնք գետեղուած են Հ. Ղեւոնդ Ալիշանի «Կամենից» աշխատութեան մէջ (ՂԱԿ): Այդ բառերի առկայութիւնը վկայում է, որ գրաբարի բառապաշարը նորակազմութիւններով համալրուել է ոչ միայն

իր զարգացման բուն շրջանում, այլեւ դրանից յետոյ, երբ զրկուել էր խօսակցական հիմքից:

Յօդուածի քննութեան արդիւնքները կարող են հետաքրքրել գրաբարի բառագիտութեան, Հայոց լեզուի պատմութեան եւ մասնաւորապէս պատմական բառարանի կազմման հարցերով զբաղուող մասնագէտներին:

Ներածութիւն

Միջին դարերում գրաբարը միջին Հայերէնին զուգահեռ գործածուում էր որպէս գրի լեզու: Սակայն գրաբար աղբիւրների բառապաշարի մի շարք բառեր տարբեր պատճառներով դուրս են մնացել ոչ միայն Մխիթար Սեբաստացու եւ մխիթարեանների կազմած միւս բառարաններից (ԲՀԼ, ՆԲՀԼ, ԱԲ), այլեւ գրաբարի բառապաշարի ուսումնասիրութեանը նուիրուած յետագայ ուսումնասիրութիւններից, մասնաւորապէս՝ ՆԲ-ից: Վերջին հանգամանքով պայմանաւորուած՝ յատկապէս նախորդ մի քանի տասնամեակներում նկատելիօրէն մեծացել է գիտական հետաքրքրութիւնը գրաբարեան եւ յետգրաբարեան շրջանների գրաբար աղբիւրների բառապաշարի նկատմամբ, որի ուսումնասիրութեան բնագաւառում արձանագրուել են գիտական նոր ձեռքբերումներ (նկատի ունենք վերջին տասնա-

¹ Առհասարակ միջին հայերէնի ժամանակահատուածից աւանդուել են գրաբար, ռամկախառն գրաբար, գրաբարախառն ռամկօրէն եւ ռամկօրէն գրուածքներ (Հ. Ղ. Վրդ. Յովնանեան, Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վերայ, Մասն Ա., Վիեննա, 1897, 16-21: Հմմտ. Գ. Ջափուկեան,

Հայոց լեզուի զարգացման փուլերը, Երեւան, 1964, 45):

մեակները ընթացքում լոյս տեսած բառա-
րանները եւ Ռ. Ղազարեանի, Լ. Յովհաննի-
սեանի, Վ. Համբարձումեանի, Ն. Յովհաննի-
սեանի եւ այլոց մեծ ու փոքր ծաւալի ու-
սումնասիրութիւնները): Սակայն յիշեալ ու-
լորտի՝ ուսումնասիրութեան կարօտ բոլոր
հարցերը դեռեւս սպառուած չեն: Ասուածը
վերաբերում է մասնաւորապէս կաթողիկո-
սական եւ պատրիարքական կոնդակների
բառապաշարում տեղ գտած նորակազմու-
թիւններին²: Դրանց մի մասը քննուել է նո-
րայայտ բառերին նուիրուած աշխատու-
թիւններում³, մինչդեռ բազմաթիւ բառեր
կարօտ են մասնագիտական քննութեան,
ինչն էլ վկայում է մեր կողմից ընտրուած
թեմայի արդիականութեան մասին:

Յօդուածի լեզուական նիւթը քաղել
ենք Հ. Ղեւոնդ Ալիշանի «Կամենից» աշ-
խատութեան մէջ տեղ գտած հայրապե-
տական կոնդակներից, որոնք 1365-1672

թթ. ընկած ժամանակահատուածում տար-
բեր առիթներով հասցէագրուել են լեհա-
հայոց համայնքին կամ լեհ թագաւորնե-
րին: Ընդհանուր առմամբ «Կամենիցում»
գետեղուած է 16 կոնդակ. երկուսը՝
սկզբնամասում (ՂԱԿ, 5-13), 14-ը՝ 10-րդ
յաւելուածում (ՂԱԿ, 215-265):

Յօդուածում նպատակ ենք հետապն-
դում քննելու այնպիսի բառային միաւոր-
ներ, որոնք գործածուել են վերոնշեալ դրա-
բար վաւերաթղթերում⁴, սակայն մինչ օրս
մասնագիտական ուսումնասիրութիւննե-
րում չեն քննուել: Քանի որ այդ կոնդակ-
ներից մի քանիսը ամենայն հայոց կաթողի-
կոս փլիպպոս Ա. Աղբակեցու անունից են
(1632-1655թթ.), ուստի նպատակաշարմար
ենք գտել սոյն յօդուածում քննել Աղբակե-
ցու՝ մեր ձեռքի տակ գտնուող մեկ այլ կոն-
դակի (թուագրուած է 1641թ. հոկտեմբերի
28) նորայայտ բառերը նոյնպէս⁵:

- 2 Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Յովհան-
նէս Կոլոտի (1715-1741թթ.) կոնդակներից մե-
կում, օրինակ, հանդիպում են այնպիսի նորա-
կազմութիւններ, ինչպիսիք են՝ *անթագչապէս*
(«անթաքոյց կերպով»), *համբորսամատոյց* (յիմիմ)
(«համբորյ (տալ)»), *դիւրաճակամ* («դիւրութեամբ
աճող») և այլն (Գ. Բամպուքճեան, *Յովհաննէս
Պատրիարք Կոլոտ (1678-1741) և իր աշակերտ-
ները*, Ստամպուլ, 1984, 259-261):
- 3 Տե՛ս մասնաւորապէս ՆԲՎԱ, որում տեղ են գտել
կոնդակներում հանդիպող առատածաւալ, ար-
գասապատիւ, հեշտալրակամ, յարախնամ, պա-
յազատագարմ, քաղցրաքարոզ և այլ բառեր:
- 4 Իհարկէ, հայրապետական կոնդակներում հան-
դիպում են նաև միջինհայերենեան քերականա-
կան իրողութիւններ և օտարաբանութիւններ,
որոնցից են (ընդգծում են)՝ Բայց *այժմ* հայիմ զի
պարտքն զմեզ *կոխել է* և շահն զգլովսն *յաղթել*
.... (1641թ.): քանզի գտորս զուարթս առատս
սիրունս սիրէ Աստուած ըստ Պօղոսի (1641թ.):
մտավարժ և խելամուտ *մեղիքներացդ* (1641թ.):
.... մանաւանդ սորա շինութեան և նորոգութեան
խառճն (1641թ.): նաև զարդարեալ փառա-
պերճս արասցէ զձեզ մալօք և ըռըզակօք,
տեղէք և կայիւ (1641թ.), փառաւոր խառճ-
նոյդ և Պորճէնճոյդ (ՂԱԿ, 9) և այլն, սակայն
դրանք խիստ սակաւադէպ են: Ի դէպ, վերջին
բառը ՄՀԲ-ն տալիս է *պորճին* ձևով (ՄՀԲ, 661),
մինչդեռ Հ. Ղ. Ալիշանը տողատակին բերում է

այնպէս, ինչպէս գործածուել է տուեալ կոնդա-
կում (*պորճէս*)՝ նշելով նաև *պորճէսնի* յոգնա-
կին և բառը համարելով Ռուբինեան հարստու-
թեան «քաղաքականօրէն արևմտեայց նմանո-
ղութեան նմուշիկ մը» (ՂԱԿ, 9): Բառացի՝ «բուր-
ժուա» բուժուագիայի դասին պատկանող անձ»
(հին ֆրանսերէն՝ bourgeois):

- 5 ՀՀ Վանաձոր քաղաքի՝ Մ. Գորկու ան. № 5 գրա-
դարանի կնիքը կրող այդ կոնդակի պատճենը
շուրջ մէկուկէս տասնամեակ առաջ մեզ տրա-
մադրել է Գուգարաց թեմի հոգևոր առաջնորդ եր-
ջանկայիշատակ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլ-
չեանը: Ինքնին հետաքրքիր և բացառիկ այդ վա-
ւերաթուղթը, որն ունի հարիւր ութ լայնադիր տող,
ուղղուած է «ի կողմանս արևելից» (տուեալ դէպ-
քում նկատի է առնում Պարսկաստանի տիրապե-
տութեան տակ) բնակչուող հայութեանը: Նրանում
հոգսաշատ կաթողիկոսը խոստովանում է, որ
«տարաշխարհիկ և զատաբնակ» լինելու պատ-
ճառով (Փիլիպպոս Ա. Աղբակեցին դէպքերի բե-
րումով յաճախ է բացակայել Մայր Էջմիածնից,
եղել է Կոստանդնուպոլսում, Երուսաղէմում, Կա-
րինում, Սպահանում, Վանում, Բաղէշում և այլուր
(Մ. Օրմանեան, *Ազգապատում*, հտ. Բ. Ս. Էջ-
միածին, 2001, § 2823-2902), ինչպէս նաև «վասն
բազմութեան աշխարհաց» (նկատի ունի «արևե-
լեան կողմերի» նահանգներն ու գաւառները)՝ ինքը
հնարաւորութիւն չունի ամեն տարի, ինչպէս
հարկն է, հանդիպելու իր հաւատացեալ հօտին,

Նշուած նպատակով յիշեալ կոնդակներէից քաղել ենք շուրջ յիսուն բառային միաւոր, քննել ենք առանձին բառայօգուածում՝ նշելով բառիմաստը, խօսքիմասային սլատկանելութիւնը, տուեալ բառի առաջին կամ միակ գործածութեան տարեթիւը՝ ասուածը հիմնաւորելով բնագրային օրինակ(ներ)ով⁶, ընդգրկել ենք նաեւ այնպիսի բառեր, որոնք՝ ա) գրաբարի բառաբաններում ունեն իրենց՝ իմաստով տարբեր համանունները, բ) գրաբարեան նորակազմութիւններ լինելով հանդերձ՝ տեղ են գտել ոչ թէ գրաբարի, այլ ժամանակակից հայերէնի բառարաններում:

Քննութիւնը հիմնականում կատարել ենք նկարագրական-վերլուծական, համեմատական եւ վիճակագրական մեթոդներով:

Նորայայտ բառեր կաթողիկոսական կոնդակներում

ԺԴ.-ԺԷ. դդ. լեհահայոց թեմին եւ լեհ թագաւորներին ուղղուած հայրապետական կոնդակների բառապաշարում տարբեր յաճախականութեամբ տեղ գտած նորակազմութիւններից են.

Անճրեւայեղ («անձրեւի սէս /առատօրէն/ թափուելով») մակրայը (1662թ.)՝ նախախնամութիւն եւ գթութիւն փառակից Հոգւոյն ճշմարտի գետօրէն ծաւալեսցի, անճրեւայեղ տարածեսցի (ՂԱԿ, 257):

*Արփիաքատակ («արեգականման») ածականը (1641թ.)՝ արփիաքատակ լուսանկար⁷:

*Բանագեկոյց («բանասաց, ճարտարախօս, հրապարակախօս») ածականը (1641թ.)՝ վսեմամիտ եւ բանազեկոյց վարդապետացդ:

Բոցանճներ («բոցակէզ») ածականը (1671թ.)՝ եւ զտալ բոցանճներ յանցանաց ազգի մարդկան՝ իւրովն զիջուցանել (ՂԱԿ, 262):

*Գեղեցկայօրիմօղ («գեղեցիկ կերպով յօրինող՝ յարգարող՝ ստեղծող՝ կարգաւորող») ածականը (1641թ.)՝ գեղեցկայօրիմօղ արուեստաւորացդ:

*Գերադիտակ («երեւելի, վեհատես») ածականը (1641թ.)՝ գերադիտակ եւ ճարտարամիտ վաճառականացդ:

Գլխափոխան ածականը (1671թ.), որը Փիլիպպոս Ա. Աղբակեցին գործածում է («Հայ առաքելական եկեղեցու գլուխներին (այսինքն՝ Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալներին ու Գրիգոր Լուսաւորչին) փոխարինող») իմաստով՝ մեք առ ի վերուստ հրաւիրեալք ի հովուապետութիւն Հայոց ազգին, գլխափոխան եւ յաջորդ լինել սրբոց Առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի եւ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին սահմանեմք, կարգեմք եւ հաստատեմք զԹէոդորոս Վարդանանցն՝ առաջնորդ հովիւ եւ տեսուչ Լեհաց երկրին, ի վերայ Հայոց ազգին (ՂԱԿ, 260): Նոր հայկադեան բառարանը (այսուհետեւ ՆՀԲ) գլխափոխան բառը չունի, Առձեռն բառարանը (այսուհետեւ ԱԲ) ունի «երեսփոխան (Քրիստոսի)» նշանակութեամբ (ԱԲ, 218), որը գրեթէ նոյնութեամբ կրկնում է Ստ. Մալխասեանցի բառարանում (այսուհետեւ ՀԲԲ)՝ «(Կրօն.) (եկեղեցու) գլխի (այսինքն՝ Քրիստոսի) փոխանորդ» (ՀԲԲ, 445):

Դիւրագնաց («գլուխ՝ հեշտօրէն գնացող՝ հեռացող») ածականը (1640թ.)՝ Յայնժամ տրտմութիւն ոչ սակաւ եւ մթութիւն ոչ դիւրագնաց եւ ցաւ ոչ հեշտափարատ

որպէսզի կարողանայ Աստուծոյ խօսքը նրանց մէջ սերմանել եւ որոմն «ի բաց խել», ուստի դա փորձում է անել իր նուիրակների միջոցով: Ապա իր հաւատացեալ հօտին յորդորում է սիրով ընդունել իր նուիրակին՝ Ղազար Պարոմտերին, ու սրբալոյս մեռողը եւ «խնդմտութեամբ» տալ Մայր Էջմիածնին հասանելիք հարկատեսակները:

6 Մեր ձեռքի տակ եղած կոնդակի պատճենից քաղուած նորակազմութիւնները բերել ենք աստղանիշով եւ առանց էջանշման:

7 Փիլիպպոս Աղբակեցու մեկ այլ կոնդակում քատակ բառով հանդիպում է երկնաքատակ նորակազմութիւնը (Յիշ., 90):

սկատեաց զիս (ՂԱԿ, 245): Դիւրագնաց համանուն ածականը բերում են նաեւ ՆՀԲ-ն եւ ԱԲ-ն, սակայն երկու բառարանում էլ՝ դիրագնալի ածականի հետ զետեղելով միեւնոյն բառայօդուածում՝ որպէս ճանապարհ գոյականը բնութագրող համանիշներ՝ «դիւրաւ գնալի. ընդ որ դիւրաւ լինի ընթանալ» (ՆՀԲ1, 630), «դիւրաւ երթալու (ճամբայ)» (ԱԲ, 249):

Երկնդոթիւն («երկատուածութիւն, երկատուելը, երկճիւղ լինելը») գոյականը (1654թ.)՝ այսուհետեւ ի ձեր մէջն այլ երկնդոթիւն չլինի (ՂԱԿ, 253):

*Չատաքնակ («հեռուում բնակուող, հեռաբնակ») ածականը (1641 թ.)՝ զի մէք տարաշխարհիկ գոլոյն եւ զատաքնակ, ոչ կարեմք ի միջի ձերում լինիլ: Հմմտ. Բեռաքնակ (ՆՀԲ1, 87):

Լուսակառոյց («լուսակերտ, լուսաշէն») ածականը (1654 թ.)՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց եւ սկստիւրաք Վաղարշապատու լուսակառոյց եւ քրիստոսամատոյց վեհափառ եւ հրեշտակապար սրբոյ աթոռոյ էջմիածնի (ՂԱԿ, 225):

*Խնդամտութիւն («խնդասիրտ լինելը, ուրախութիւն») գոյականը (1641 թ.)՝ Արդ եւ դուք յօժարութեամբ եւ խնդամտութեամբ տուք: Հմմտ. Խնդամտութիւն (ՆԲԲ1, 952) եւ Խնդամտութիւն (ՀԲԲ2, 273):

*Խորհրդըզգեաց («խոհեմ, խելացի, լըջախոհ») ածականը (1641թ.)՝ Խորհրդըզգեաց եւ ճշմարտաբան սարկաւազացդ:

Խորհրդաթիւ ածականը («խորհրդաւոր թիւ ունեցող», «խորհրդանշական թուով» որը, կարծում ենք, կապ ունի Իսրայէլի տասներկու սերունդների տասներկու դատաւորների թուի հետ) (1662թ.)՝ Յորմէ ժամանեալ հասցէ աստուածային բազմապատիկ աւրհնութիւն ի վերայ Խորհրդաթիւ երկոտասան Դատաւորաց, արդասապատիւ տօվլաթաւորաց եւ առհասարակ ժողովրդոց մեծի եւ փոքու. ամէն (ՂԱԿ, 252):

Կայսերանիստ («որտեղ նստում է կայսրը, թագաւորը») ածականը (1671թ.)՝ Եւ զնայ ձեռնադրել եպսկոպոս Լեհաց երկրի՝ ըստ նախակարգութեան Աստուծոյ եւ օժանդակութեան ամենեցուն, ի կայսերանիստ քաղաքի Կոստանդնուպօլսի (ՂԱԿ, 260): Հմմտ. արքայանիստ (ՆՀԲ1, 385) թագաւորանիստ (ՆՀԲ1, 789), միջինհայերենեան աղբիւրներում (մեզ հանդիպած առաջին յիշատակութիւնները՝ 1575-1578թթ.) պարոնանիստ նորայայտ բառը (ՂԱԿ, 49):

Կեցղանաթաղ («ողջ-ողջ թաղուած») ածականը (1457թ.)՝ Եւ ի կեցղանաթաղ զերեզմանէ Սրբոյն Գրիգորի՝ հրաշագործ Խոր վիրապէ (ՂԱԿ, 225):

*Հանդարտաշարժ («հանդարտօրէն շարժուող, դանդաղաշարժ») ածականը (1641 թ.)՝ առնելով Բանդարտաշարժ զմիտումն ցասմանականին:

*Հեզախաղաց («հանդարտօրէն շարժուող, հեզասահ») ածականը (1641թ.)՝ առնելով Բեզախաղացս զմիտումն ցասմանականին: Հմմտ. Բեզագնաց (ՆՀԲ2, 80):

Հանապազամատոյց («հանապաղ՝ միշտ մատուցուող») ածականը (1640թ.)՝ եւ է լցէալ (եկեղեցի- Գ.Խ.) պաշտօնէիւք Քրիստոսի, որք զցայգ եւ զցերեկ Բանապազամատոյց աղօթիւք եւ հաշտարար սկստարագօք՝ զձեզ ունին ի մտի (ԱԿ., 246):

Հեշտափարատ («հեշտօրէն փարատուող») ածականը (1640թ.)՝ Յայնժամ սրտմութիւն ոչ սակաւ եւ մթութիւն ոչ դիւրագնաց եւ ցաւ ոչ Բեշտափարատ սկստեաց զիս (ՂԱԿ, 245):

Հրեշտակախնամք («հրեշտակների կողմից խնամուող») ածականը (1654թ.)՝ Բրեշտակախնամք սրբոյ աթոռոյս էջմիածնի:

Հրեշտակապար («որտեղ հրեշտակներն են պարում՝ թեւածում») ածականը (1654թ.)՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց եւ

պատրիարզ Վաղարշապատու լուսակառոյց եւ քրիստոսամատոյց վեհափառ եւ հրեշտակապար սրբոյ աթոռոյ էջմիածնի (ՂԱԿ, 255):

Ձեռնահմուտ («Հմուտ ձեռքերով, ձեռքերով Հմուտ») ածականը (1384թ.)՝ ձեռնահմուտ արուեստաւորացդ (ՂԱԿ, 217):

*Մշմարտագուն («ճշմարիտ՝ արդար՝ ազնիւ ազգից՝ տոհմից սերուած») փոխանուն ածականը (1641թ.)՝ Յորմէ ժամանեալ Հասցէ գիր օրհնութեան առ քրիստոսափառսդ եւ ճշմարտագունսդ:

*Մշտապահպան («մշտ պահպան, մշտապէս պահպանող») ածականը (1641թ.)՝ նախախնամութիւն ամենասրբոյ Հոգւոյն յարախնամի եւ մշտապահպանի:

Յարամնայական («մշտնջենական, յաւերժական») ածականը (1662թ.)՝ Օրհնեցէ զձեզ Բրիստոս Աստուածն յաւիտենական, պահելով անփորձ եւ անսասան, երկարածդեալ ամօք յարամնայական (ՂԱԿ, 257): Հմմտ. յարամնայ, յարամնացական (ՆՀԲ2, 343), յարամնական, յարամնաց (ԱԲ, 588): Թէեւ որեւէ բառարանում յարամնայական բառայօգուած չի հանդիպում, սակայն ՆՀԲ-ի հեղինակներն այն գործածում են որպէս յարամնացական բառի գուրգռեցութիւն (տե՛ս ՆՀԲ2, 343՝ ՅԱՐԱՄՆԱԿԱՆ ԲԱՐԱՅՕԳՈՒՄԸ):

*Յարավտակ («յաւերժահոս՝ յարահոս») ածականը (1641 թ.)՝ ըստ ծառոց տնկեցելոց ի գնացս մշտահոսան գետոց եւ առուոց յարավտակաց:

*Յաւետաշխատ («մշտապէս՝ անվերջ չարչարող՝ աշխատող») ածականը (1641 թ.)՝ յաւետաշխատ ռամկացդ:

*Յիսուակերտ («Յիսուսի կողմից կերտուած») ածականը (1641թ.)՝ յիսուակերտ սրբոյ աթոռոյ էջմիածնի:

*Նետամխութիւն («նետածգութիւն») ածականը (1641թ.)՝ զամենայն նետամխութիւնս չարին ընկրկելով: Հմմտ. նետածգութիւն:

*Շքեղայօրէն («շքեղօրէն յօրինուած՝ կառուցուած՝ կարգաւորուած՝ յարգարուած») ածականը (1641թ.)՝ Հաստահեղոյս եւ շքեղայօրէն սրբոյ աթոռոյ էջմիածնի:

*Շքեղափառ («շքեղ եւ փառահեղ, պերճաշուք») ածականը (1641 թ.)՝ շքեղափառ ազատացդ:

*Պերճանահանգ («որպէս պերճանք, պերճօրէն») ածականը (1641 թ.)՝ պերճանահանգ քրիստոսազարդ:

Պերճապատի («մեծապատիւ») ածականը (1640թ.)՝ Յորմէ ժամանեալ Հասցէ աստուածային աւրհնութիւն ի վերայ պերճապատի ազատացդ (ՂԱԿ, 244): Ըստ Ստ. Մալխասեանցի՝ գործածուել է «իրեւ յարգական տիտղոս» (ՀԲԲ4, 95):

*Վեհախումբ («վեհօրէն խմբուած») փոխանուն ածականը (1641թ.)՝ Յորմէ ժամանեալ Հասցէ գիր օրհնութեան առ Վեհախումբսդ:

*Վերանկար («վերստին նկարուած՝ պատկերուած») փոխանուն ածականը (1641թ.)՝ Յորմէ ժամանեալ Հասցէ գիր օրհնութեան առ Վերանկարսդ:

Տեառնափոխ («տիրոջ փոխարինող») ածականը (1640թ.)՝ Յորմէ ժամանեալ Հասցէ աստուածային աւրհնութիւն ի վերայ տեառնափոխ դատաւորացդ (ՂԱԿ, 244):

Տիրապան («Տիրոջ կողմից պահպանող՝ պաշտպանող») ածականը (12.02.1654թ.)՝ որք ի տիրապան եւ քրիստոսախնամ քաղաքիդ Իլովայ կայք բնակեալ (ՂԱԿ, 252), որը նոյն Փիլիպպոս Ա Աղբակեցու կողմից մօտ երկու ամիս յետոյ (15.04.1654թ.) գրուած մեկ այլ կոնդակում վկայւում է տեառնապան տարբերակով՝ եւ աստուածային օրհնութիւն ի վե-

րայ տեստմապախ եւ քրիստոսախնամ մայրաքաղաքիդ իլովայ (ՂԱԿ, 255)⁸: Հարկ է նկատել, որ գրաբարի բառապաշարին բնորոշ են ե՛ւ տիր<տէր, ե՛ւ տեստմ<տէր սերող հիմքերով բարդութիւնները, ինչպէս՝ տիրադաւ, տիրաւապաւ, տեստմորդի, տեստմազաւուստ եւ այլն: Ընդ որում կան նաեւ դրանցով կազմուած զուգածեւեր՝ տիրամայր-տեստմամայր եւ այլն:

*Տնայօրինօղ («տունը յարդարող, տունը՝ տնտեսութիւնը կարգաւորող») ածականը (1641թ.)՝ պարկեշտասուն եւ տնայօրինօղ կանանցդ:

*Փառապերն («փառաւոր եւ պերճ, պերճաշուք») ածականը (1641թ.)՝ նաեւ զարդարեալ փառապերն արասցէ զձեզ:

*Փոխարինահատոյց («փոխարէնը հատուցող») ածականը (1641թ.)՝ Քրիստոսի Աստուծոյ, որ է փոխարինահատոյց եւ վարձատրիչ մեզ եւ ձեզ ամենեցունց աշխատաւորաց եւ վաստակաւորաց:

*Քաղաքագարդ («քաղաք(ներ) զարդարող») ածականը (1641թ.)՝ քաղաքագարդ եւ գեղեցկայօրինօղ արուեստաւորացդ:

*Քանքարաթաքուստ («վաստակածը ապերախտաբար թաքցնող») ածականը (1641թ.)՝ ծառայ չար եւ վատշուեր կարգալով եւ քանքարաթաքուստ: Հմմտ. համանիշ քանքարաթաքոյց ածականը, որը բերում են ՆՀԲ-ն՝ «որ թաքուցանէ կամ թաքոյց զաստուածապարգեւ զքանքարս՝ ըստ առակի ապաշնորհ ծառայի» (ՆՀԲ2, 981) եւ ԱԲ-ն՝ «առած քանքարը ծածկող՝ ծոյլ եւ ապերախտ (ծառայ)» (ԱԲ, 824):

*Քրիստոսագէն («Քրիստոսի հաւատով զինուած») ածականը (1641թ.)՝ Աստուածամերձ եւ քրիստոսագէն քահանայիցդ:

Քրիստոսահիմն («Քրիստոսի կողմից հիմնուած») ածականը (1640թ.)՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարկ Վաղարշապատու քրիստոսահիմն եւ լուսանկար երկնահանգէտ սրբոյ աթոռոյն էջմիածնի (ՂԱԿ, 244): Հմմտ. քրիստոսարկու (ԱԲ, 860):

Քրիստոսամատոյց («Քրիստոսի կողմից արուած, քրիստոսատուր») ածականը (1654թ.)՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարկ Վաղարշապատու լուսակառոյց եւ քրիստոսամատոյց վեհափառ եւ հրեշտակապար սրբոյ աթոռոյ էջմիածնի (ՂԱԿ, 225): Հմմտ. քրիստոսատուր (ԱԲ, 860):

Քրիստոսատուածադաւան («Քրիստոս աստծուն դաւանող») ածականը (1410թ.)՝ քրիստոսատուածադաւան ժողովրդականացդ (ՂԱԿ, 221):

*Քրտնահեղ («քրտինք թափող, ծանր աշխատանք կատարող») ածականը (1641թ.)՝ քրտնահեղ եւ յաւետաշխատ ուսմկացդ:

Մեր կողմից քննուող նորայայտ բառերի՝ միջնադարում կաթողիկոսական կոնգակներին մէջ առկայութիւնը վկայում է, որ գրաբարի բառապաշարը նորակազմութիւններով համալրուել է ոչ միայն իր զարգացման բուն շրջանում (5-11-րդ դդ.), այլեւ դրանից յետոյ, երբ զրկուել էր խօսակցական հիմքից, սակայն միջին հայերէնին զուգահեռ դեռեւս գործածուում էր իբրեւ գրի լեզու⁹: Այս ժամանակահատուածում

8 Տե՛ս ՆԲՎԱ, 199:

9 Այսպէս՝ Ժ. Գ. Կ. պատմագիր, փիլիսոփայ և մանկավարժ Վարդան Արևելցին իր մի ներքողում (Նորին Վարդանայ վարդապետի ասացեալ բան գովեստի պատմագրաբար վասն սրբոցն Սահակայ և Մեսրոպայ և այլոց թարգմանչացն գործածել է աղասպատել բայը՝ վասնորոյ

պարտ է դարմանել զնա և կաղանդել, դեղել և աղասպատել. զի թերևս զղջասցի և գայցէ յոլղոյթիւն (Փ. Անթաթյան, Վարդան Արևելցու ներքողը՝ նուիրում հայոց գրերի գիտին, «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, 365-398, էջ 378): Վերջինս ՄՀԲ-ում բացակայում է. սակայն ՆՀԲ-ում գտնում ենք Ե. Դ. մեկ անգամ վկայում

գրաբարի բառապաշարի զարգացումը գերազանցապես կատարվում է իր իսկ ունեցած ներքին միջոցներով¹⁰:

Կոնդակներում Հանդիպող նորայայտ բառերը գերազանցապես բարդ կամ բարդածանցաբան են¹¹ եւ Հիմնականում՝ յօդակապով Համադրական բարդութիւններ, մինչդեռ անյօդակապ բարդութիւնները մեր կողմից քննուող նորայայտ բառերի ընդհանուր թուի 5 տոկոսից էլ քիչ են (երկնդութիւն, խնամտութիւն, խորհրդագէտ, ճշմարտագուն, յաւտաշխատ):

Նորայայտ բառերի մի մասը կազմուել է գրաբարի բառապաշարում արդէն իսկ առկայ բարդութիւնների Համաբանութեամբ՝ կայսերանիստ<արքայանիստ//թագաւորանիստ, յիսուսակերտ<աստուածակերտ> եւ այլն: Առկայ են միեւնոյն կամ տարբեր վաւերաթղթերում Հանդիպող Հոմանիշ եւ Համանիշ զոյգեր (ինչպէս՝ հանդարտաշարժ-հեզախաղաց, շքեղափստ-փառապերճ եւ այլն):

Խնդրոյ առարկայ բառերի կազմութեան քննութիւնից պարզ է դառնում, որ դրանք կազմողները տուրք էին տալիս գրաբարեան լեզուամտածողութեանը Հարիր

բառակազմական կաղապարներին, մասնաւորապէս՝ «գոյական+յօդակապ+բայահիմք» (օր.՝ քրտնահեղ), «մակբայ+յօդակապ+բայահիմք» (օր.՝ հանապազամատոյց), «ածական+յօդակապ+բայահիմք» (օր.՝ դիրագնաց) մասնակաղապարներին:

Քննուած նորայայտ բառերի մի մասը աւելի ուշ Հանդիպում է նաեւ նոյն կամ տարբեր կաթողիկոս(ներ)ի օրօք գրուած կոնդակներում: Այսպէս՝ լուսականոյց (1641 թ.), դերադիտակ (1654 թ.), արփաքատակ (1641 թ.) բառերը յետագայում դործածուած են նաեւ Յակոբ կաթողիկոսի կոնդակներից մեկում (1656 թ.) (Յիշ., 92): Ասուածը նշանակում է, որ միջնադարում շրջանառու էին բառեր, որոնք գերազանցապէս յատուկ էին կաթողիկոսական կոնդակների բառապաշարին: Մեր այս դիտարկումից յանգել ենք նաեւ այն Հետեւութեան, որ յօդուածում քննուած որոշ նորայայտ բառեր կարող են Հանդիպել նաեւ աւելի վաղ շրջանի կոնդակներում: Եւ իրօք, ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ քրիստոնաւորները (1640թ.) նորայայտ բառը,

աղապատանք գոյականը՝ «Աղեօք գթոյ և սիրոյ պատումն. բնատրական բերումն. սէր և կարեկցութիւն» իմաստներով, որից էլ՝ Վարդան Արևելցու աղապատել նորակազմութիւնը՝ «սիրել, կարեկցել, գթալ» իմաստներով:

ԺԸ. դարակազմի (1704թ.) մի գրաբար օրագրութեան մէջ (ՂԱԿ, 147-159) գտնուում ենք շուրջ 10 հեղինակային նորակազմութիւն: Դրանցից մի քանիսը դիտարկել է Ն. Պողոսեանը՝ արտաքարշեցեալ, արտաքաղաք, արտելանց, աւանամէջ, վերայաւելույ (ՆԲԿԱ), որոնց մենք յայտնում ենք եւս երկուսը՝ կիսախրամ («կիսագետնափոր շինութիւն», բառացի՝ «կիսափոս») գոյականը՝ համարեաք գպանդոկ իմն գտանել, որպէս ասէին, և ահա կիսախրամ և տիղմն ի միմ (ՂԱԿ, 159), նախանշանակեալ («նախանշուած») կրատրական սեղի անցեալ դերբայը՝ միմչև ցնախանձանակեալ օրն ոչ վճարեցի բոլորն (ՂԱԿ, 147): Այդ բառերը գրաբարում արդէն իսկ գործածուող բառակապակցութիւնների ածան-

ցաւոր համանիշներն են (հմտ. արտելանել<արտաքս ելանել) և հիմնականում ունեն արհեստական բնույթ:

10 Իհարկէ, խնդրոյ առարկայ հայրապետական կոնդակներում հանդիպում են նաև միջինհայերէնէն բառեր (այդ թուում՝ օտարաբանութիւններ) ու քերականական իրողութիւններ, որոնք, սակայն, սակաթիւ և սակաւադէպ են, ուստի որակ չեն կազմում, ինչպէս՝ Բայց այժմ հայիմ զի պարտքն զմեզ կոխել է և շահն զգլոյսն յաղթել (1641թ.): քանզի գտուրս գուարթս առատս սիրունս սիրէ Ասուած ըստ Պօղոսի (1641թ.): մտաւարժ և խելամուտ մեղիքներացդ (1641թ.): մանաւանդ սորա շինութեան և նորոգութեան խառճն (1641թ.): նաև զարդարեալ փառապերճս արասցէ զձեզ մայօք և ըրդզակօք, տեղեւք և կալիւ (1641թ.), փառաւոր խաւճաւորդ (ՂԱԿ, 10) ևն:

11 Նկատի չունենք 11-րդ ծանօթագրութիւնում բերուած նորայայտ բառերը, որոնք մեծաւ մասամբ նախաձանցաւոր են:

օրինակ, նախապէս երկու անգամ գործածուել է Միքայէլ կաթողիկոսի կոնդակներում (1556թ., 1570թ.) (Յիշ., 83, 86):

Եզրակացութիւններ

Միջնադարից մեզ հասած կաթողիկոսական կոնդակներում եւ այլ բնագրերում հանդիպում են նորակազմ բառեր, որոնց մի մասն առաջօր տեղ չի գտել համապատասխան բառարաններում եւ կարօտ է լեզուաբանական քննութեան:

«Կամենից» աշխատութեան հայրապետական կոնդակներից քաղուած շուրջ յիսուն նորայայտ բառերից շատերը ածականներ են եւ աւելի յաճախ հանդիպում են խնդրոյ առարկայ կոնդակների ներածական մասում: Դա բնական է, քանի որ նմանօրինակ վաւերացումներում փորձ էր արւում առաւել տպաւորիչ բնորոշումներով փառաբանել Մայր աթոռ Ս. Էջմիածինը եւ սիրտ շոյող առանձին բնութագրումներով դիմել հայ առաքելական եկեղեցու հաւատացեալ հանրութեան տարբեր դասերին ու խաւերին:

Հայրապետական կոնդակներում գործածուած նորայայտ բառերի մեծ մասն ունի յօդակապաւոր համադրական կազմութիւն. դրանք կազմողները, միջինհայերենեան լեզուակիրներ լինելով հանդերձ, դիմում էին գրաբարեան լեզուամտածողութեանը հարիւր բառակազմական կաղապարների: Հէնց վերջին հանգամանքով է պայմանաւորուած կոնդակներում հանդիպող նորակազմութիւնների մի մասի արհեստական բնոյթը:

Նորայայտ բառերի յաճախագէտութեամբ առանձնանում են Փիլիպպոս Աղապակեցու կոնդակները. յօդուածում դիտարկուած շուրջ յիսուն բառային միաւորների կէսից աւելին քաղել ենք յիշեալ կաթողիկոսի կոնդակներից:

Յօդուածի քննութեան արդիւնքները կարող են հետաքրքրել գրաբարի բառագիտութեան, հայոց լեզուի պատմութեան եւ պատմական բառարանի կազմման հարցերով զբաղուող մասնագէտներին:

Գտնում ենք, որ կաթողիկոսական եւ պատրիարքական կոնդակների լեզուն ու ոճը կարօտ են համալիր ուսումնասիրութեան:

Օգտագործուած գրականութեան եւ համաոտագրութիւնների ցանկ

Ա.Բ. – Աւգերեան Ս., Ընթացեալ Գ., Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

Անթաքեան Փ., Վարդան Արեւելցու ներքողը՝ նուիրուած հայոց գրերի գիւտին / Բանբեր Մատենադարանի, № 7, 1964, 365-398:

Բամպուքեան Գ., Յովհաննէս Պատրիարք Կոլոտ (1678-1741) եւ իր աշակերտները, Ստանպուլ, 1984:

ԲՀԼ – Բառգիրք հայկազնեան լեզուի, հատոր II, Արարեալ բազմաութուն, եւ աչալուրջ ճգանք՝ յաշակերտաց ամենապատիւ տեառն Մխիթարայ մեծի աբբայի, եւ բաբունապետին Սեբաստացւոյ, հտ. 1-2, Վենետիկ, 1747-1769:

Գ.Դ.Բ. – Ղազարեան Ռ., Գրաբարի դարձուածարանական բառարան, Երեւան, 2012:

Համբարձումեան Վ., Յովհաննէս Իմաստասէր Օձնեցի, «Էջմիածին», 1997, Դ-է, էջ 96-105:

Համբարձումեան Վ., Սիմէոն կաթողիկոս Երեւանցու «Զամբռ» երկի բառապաշարը / «Էջմիածին», 2006, է, էջ 42-54:

Համբարձումեան Վ., Նկատառումներ Սիմէոն կաթողիկոս Երեւանցու «Բարոգգրքի» լեզուի վերաբերեալ, «Էջմիածին», 2007, Թ, էջ 100-109:

ՀԲԲ1-4 - Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, Երեւան, 1944-1945:

Յովհաննիսեան Լ., Գրաբարի բառարան, Նոր հայկազեան բառարանում չվկայուած բառեր, Երեւան, 2010:

Յովհաննիսեան Ն., Նորակազմ բայեր ժԲ.-ժԳ. դարերից ականդուած ձեռագիր բառարաններում / «Էջմիածին», 2023, է, էջ 65-78:

Յովհաննիսեան Ն., Նորակազմ բառեր XII- XIII դարերից ականդուած ձեռագիր բառարաններում / Հայոց լեզուի պատմութեան հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի նիւթեր, Երեւան, 2023, էջ 123-132:

Յովհաննեան Ղ. Վրդ., Հետադատութիւնք նախնեաց ուսմիօրէնի վերայ, Մասն Ա, Վրիննա, 1897:

ՂԱԿ - Ալիշան Ղ., Կամենից, Տարե-

գիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ Հաւաստչեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896:

Յիշ. - Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը), աշխատասիրութեամբ Պարոյր Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007:

ՆԲ - Բիւզանդացի Ն., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. սրբագրուած եւ ճոխացուած Նորայր Ն. Բիւզանդացու ձեռքով: Հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնեւ, 1990:

ՆԲՈՒԱ - Պօղոսեան Ն., Նորայայտ բառեր վաղաշխարհաբարեան աղբիւրներում, Երեւան, 2014:

ՆՀԲ1-2 - Աւետիքեան Գ, Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

Ջառուկեան Գ., Հայոց լեզուի զարգացման փուլերը, Երեւան, 1964:

Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001:

